№ 40 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1894 № 40

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

# ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 րուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 րուբլի: Թէհրանում գրւում են միմիայն խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

## ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ“ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„Շաւիղը“ կը հրատարակուի Թէհրանում (մօտաւորապէս կրկին մեծութեամբ) նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ: „Շաւիղի“ բաժանորդագինն է մէկ թօման, կէս տարուանը վեց ղրան: Արտասահմանում՝ 3 րուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 րուբլի կամ 4 ֆրանք:

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետևեալ հասցէով. Черезъ Баку Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. А. Бекъ-Назарову. Իսկ նամա՛կներ և թղթակցութիւններ հետևեալ հասցէով. Téhéran Rédaction „CHAVIGH“.

Դաւրէժում՝ ցանկացողները կարող են գրուիլ Բաղդասար Մելիք Սարգսեանցի մօտ, Սալմաստում Յովհաննէս Ապրէսեանցի մօտ, Արտաբիլում՝ Յակոբ Էլչիբէկեանի մօտ, Նոր-Ջուղայում՝ Յովսէփ Բարսէղեանցի մօտ, Բուշիրում՝ պ. Կ. Զէյթունեանի մօտ, Մարաղայում՝ Մելքոն Խալափեանցի մօտ, Ուրմիում՝ Ալէքսան Յովսէփեանցի մօտ:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թէ ինչ արեց Այվազեան հայր սուրբը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Արտաքին լուրեր.—Բանասիրական. Թեմական տեսուչ Ատրպատականում.—Յայտարարութիւններ:

### ԹԷ ԻՆՉ ԱՐԵՑ ԱՅՎԱԶԵԱՆ ՀԱՅՐ ՍՈՒՐԲԸ

—

Մօտ երկու ամիս է, ինչ որ Գեր. Սահակ Այվազեան հայրը մուտք է գործել Թէհրան և այն էլ այնպիսի մէկ ժամանակ, երբ Թէհրանայ ազգային խնդիրները չատ խառն դրութեան մէջ էին գտնւում, բոլորովին անիշխանութիւն էր տիրում ներքին գործոց մէջ. անուշադրութեան էին մատնուած և անգործադրելի էին մնում թեմական առաջնորդի հրահանգներն ու հրամանները, անլսելի էին մնում Կաթուղիկոսական կոնդակները, վերջապէս ամեն ինչ անկերպարան վիճակի մէջ էր, ամեն ինչ մատնուած էր մի քանի կարծեցեալ գործողների բարեհաճ կամքից: Այդ ժամանակն էր, ինչպէս ասացինք, որ Այվազեան հայրը Ս. Էջմիածնից ժամանեց Թէհրան: Ամեն ոք աչքը տնկել և ականջները սրել էր դէպի նա և ինչպէս որ լուր էր տարածուել թէ Վեհափառ Հայրիկի կողմից յատկապէս քննիչ էր գալիս, որով ամեն մի հայ անհամբեր սպասում էր թէ ինչ պիտի անէ նա: Թէև քննիչ չէր, այդ իմացուեցաւ, այսուամենայնիւ Վեհափառ Հայրիկից, որպէս կարծում ենք, մասնաւոր հրահանգներ պիտի ունենար վերակարգելու դպրոցական և եկեղեցական մի քանի խնդիրներ որոնք, թէև թեմական առաջնորդի կողմից՝ կարգի դրուած և հաստատուած էին, սակայն մի քանի քինախնդիր մարդոց հակառակութիւնների պատճառով քայքայուելու վրայ էին և գործերի այդ հանգամքներում էր որ ազգային հաստատութիւններն իրանց ճգնաժամին էին հասել և հայր Այվազեանն էլ Թէհրան էր ոտք կոխում:

Ուստի հայր Այվազեանի համար պէտք էր մի անխոնջ աշխատութիւն, իբրև փոխանորդի, թեմական առաջնորդից կար-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՈՒՉ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

—

Տարիների ընթացքում պարսկահայոց մէջ այրող հարցը դպրոցական խնդիրն է, որ իւր գերազանց նշանակութեամբ դէպի ինքն է գրաւում փոքր ի շատէ կրթական գործով հետաքրքրուող շրջաններից կամ անհատներից սկսած մինչեւ ամենալուրջ ու գրական մտածողների ուշադրութիւնը: Թերթեցէք հայ լրագրութեան վերջին տարիների բոլոր էջերը եւ դուք կը գտնէք, որ Պարսկաստանից ուղարկուած թղթակցութիւնների (maximum) առաւելագոյն մասը կազմում են այն նամակները կամ յօդուածները որոնք, այսպէս թէ այնպէս, նուիրուած են եղել պարսկահայոց կրթական գործին: Կրթական գործը իւր մօտիկ անցեալի եւ ներկայ դրութեամբ ներկայացնում է մի Գորդեան հանգոյց, առեղծուած պարսկահայոց մէջ. այնպէս որ ոչ մի իշխանական մարմին կամ կազմակերպութիւն չէ կարողանում լուծել: Ամեն անգամ, երբ առաջնորդական ընտրական հարց է ծագում մէջտեղ, մէջտեղից շատերը այդ ընտրութեան մէջ ղեկավարւում են այն սկզբունքներով կամ զգացմունքներով, որոնք ուղղակի բղխում են կրթական գործի վրայ ունեցած նրանց տեսութիւններից, թէեւ, պէտք է ասած, որ այս երեւոյթը չէ կարելի ընդհանրացնել: Թեմական առաջնորդի անձնաւորութեան մէջ նրանք աշխատում են գտնել, ի միջի այլոց, եւ կրթական գործի առեղծուածային լուծումը: Մենք մեր կողմից այդպիսի յոյսերն ու ակնկալութիւնները համարելով հասարակութեան անինքնուրոյնութեան եւ սեփական դրամաքանութեամբ նախաձեռնելու անընդունակութեան նշան, միեւնոյն ժամանակ աւելացնում ենք, եւ իրաւացի կերպով, որ առաջնորդը մեծ դեր ունի խաղալու բոլոր ժողովրդական ձեռնարկութիւնների մէջ եւ հէնց այդ ակնյայտ հանգամանքն է, ցուցէ, որ, մեր կարծիքով, շատերին ծայրահեղ անինքնավստահութեան կամ աննախաձեռնութեան նեղ շրջանի մէջ է պարփակում: Այսպիսի դէպքերում, այսինքն երբ հասարակութիւնը իւր ընտրած անձնաւորութեան մէջ իրականացած չէ տեսնում իւր յոյսերը, փայլուն եւ ոսկի երազները, ահա այն ժամանակ նրա հիասթափումը կատարեալ է լինում, նոյնիսկ մահացնող ներգործութիւն է ունենում հասարակութեան զգացմունքների վերայ: Եւ հասարակութիւնը կամ ժողովուրդը իւր վերաբերմունքը այդպիսով լաւից դէպի վատը փոխելով ընտրուած անձնաւորութեան մասին, փոխում է եւ իւր հայեացքները ընդհանուր գործի վրայ: Եւ ամեն մի հասարակական գործ այսպիսի բացասական, աննպաստ հանգամանքների շնորհիւ խեղդւում է նոյնիսկ իւր սաղմնային վիճակին մէջ:

Բոլոր վերեւ ասածներից, ուրեմն, հետեւում է, որ ամեն մի հասարակական գործի յաջողութիւնը գլխաւորապէս կախումն ունի յայտնի հասարակութեան գիտակցական, ներգործիչ մասնակցութիւնից այդ գործի մէջ եւ ոչ թէ կրաւորական դեր կատարելուց:

Կրթական գործի կաղալը պարսկահայոց մէջ չա-

Ուրեմն եթէ մի և նոյն թիւն է ինչ որ էր Ազգային Ուսումնասիրաց ընկերութեան գործադիր ժողովի թիւը, և եթէ այս նոր հոգաբարձութիւնը կառավարելու էր միևնոյն վարժարանը ինչ որ կառավարում էր նախկին հոգաբարձութիւնը, էլ ինչ հարկ կար այդքան աղմուկի և շփոթութեան և եթէ երբէք հարկը ստիպում էր ոևէ մի փոփոխութիւն բերել այդ վարժարանի ներքին կամ արտաքին կազմակերպութեան մէջ կարող էին միմիայն կանոնագրութեան մի քանի կէտերը միայն փոփոխութեան ենթարկել քանի որ նա արդէն վերաքըննելի էր։

Միքայէլ Յ. Եղիազարեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ամսոյս 20-ին Լիվատիայում երեկոյեան ժամը 5 ր. 40-ին ի Տէր հանգեաւ Նորին Վեհափառութիւն ԱԼԷՔՍԱՆԴՐ III Կայսր և Ինքնակալն Ամենայն Ռուսաց։

—

Երէկ Նորին Վեհափառութեան Ռուսաց Կայսեր մահուան հեռագիրը հասնելուն պէս բոլոր պետութիւնների ներկայացուցիչները և նոյնպէս բոլոր ռուսահպատակները աճապարեցին երթալ և իրենց ցաւակցութիւնը յայտնել Ռուսաց լիազօր դեսպանին։ Ի նշան սգոյ ամեն դեսպանատունների դրօշակները կիսով չափ բացուած են։

—

Ներկայ համարում, առանց փոփոխութեան հրատարակում ենք մեր աշխատակից Յովհաննէս-Խան Մասեհեանի նամակը։ Մեր կողմից ոչ մի դիտողութիւն կամ նկատողութիւն չենք անում համարելով նրան մի անհիմն գրութիւն, թողնելով այդ պարտաւորութիւը օտարներին։

—

Սուրբլայա քաղաքից ստացել ենք նոյն քաղաքի և շրջակաների գաղթականութեան Եսայի Սրբազանին 14 օգոս. 25 ին գրուած մի նամակի պատճէնը որը գովում է Նորին Սրբազնութեան եռանդուն գործունէութիւնը։ Տեղի պակասութեան պատճառով չենք կարող հրատարակել

—

Մարաղայից մեզ գրում են որ սաքզի բերքը այս տարի սակաւ է լիտրն արժէ 3 ղռան 25 կոպէկ սպիտակ փողի։ Ռուսաց թղթադրամի փոփոխութեան պատճառով ամենայն ինչ թանգացել է։

—

Շիրազից ստացել ենք անցորդ ստորագրութեամբ մի նամակ որը կէտ առ կէտ հաստատում է „Շաւղի“ 30 համարում ուղիղ տուած տեղեկութիւնները, այսինքն եկեղեցապատկան տների սաստիկ քաքայումն և նորանց մէջ տարիներով անվարձ նստելը, միևնոյն ժամանակ հասարակութեան իւր հոգևոր տուրքերը չը վճարելը (ամսական 2 ղ.) Գալով 35 համարում հրատարակուած մի այլ նամակի մի կէտին ասում է անցորդը թէ ուղևորի եղբօր համար մի հանգանակութիւն են արել բանկի և հեռագրատան գործակատարներն որից գոյացել է միայն 5 ղռան... և "փոխանակ այդ տեսակ առատաձեռնութեանց խորհուրդ է տալիս՝ լրատուին ո՞չ լաւ կանեն Շիրազաբնակ հայերը իւրեանց 2 ղռան տուրքերը վճարեն քահանային եթէ չեն ցանկանալ չը վճարողների անուան ցուցակը հրատարակուած տեսնել։

—

Դավրէժից մեզ գրում են որ մեծադղորդ „Սէր“ ընկերութիւնը իւր երկարամեայ գործունէութիւնից յետոյ մտադիր է փոքր ինչ հանգստանալ։ 93 թուին Մահլամի համար վարձուած ուսուցչի վարձը մինչև հիմա մնում է։ Վարչութիւնը ոչ մի կերպով չէ յետաքրքրւում այդ գործով, չը նայելով որ ուսուցիչը վաղուց է որ վերադարձել է Դավրէժ։

—

Դավրէժից հաղորդում են հետևեալը։ Այս օրեր հասաւ Դավրէժ մեր նոր Մստաշար-Դովլէն։ Երէկ ամսոյս 16-ին հայ վաճառականները և ս. առաջնորդը ներկայացան նորին գերազանցութեան։ Դավրէժ ժամանելու օրը հայ արհեստաւորների դասակարգը բաւականի տեղ ընդառաջել էր։

—

Նոյն տեղից մեզ գրում են։ Այս օրերըս ս. առաջնորդը ստացաւ Ատրպատականի ռուսաց ընդհանուր հիւպատոսից Արամեան ուսումնարանների օգտին տրուած ներկայացման փողը 750 թուման, որից 150 թուման նորին գերազանցութիւնը, որոշել է յատկացնել Լիլավայի աղքատ աղջիկներին խնամող կանանց բարեգործական ընկերութեանը։ Բայց, ինչպէս լսում ենք, Լիլավայի հոգաբարձութիւնը զլանում է տալ այդ գումարը ընկերութեանը։

—

Դավրէժից հաղորդում են հետեւեալն, Սալմաստի տեսուչը կատարել է մի այսպիսի կուրիօզ, Դավրէժից հեռագրել է Սալմաստ, որ խալիֆան գալիս է։ տեղական ժողովուրդը կարծելով եկողը ընդհանուր Ատրպատականի առաջնորդն է, մեծ բազմութեամբ ընդառաջ են գալիս։ Բայց մեծ է լինում ժողովրդի զարմանքը երբ առաջնորդի փոխարէն նորանց ներկայանում է նորօծ Արսէն վարդապետ Վեհունին։

—

Նոյն տեղից մեզ գրում են, որ թեմական տեսչի ուղարկած ուսուցիչները ոչ մի ընդունելութիւն չեն գտնում ժողովրդից։ Մահլամ ուղարկուած ուսուցիչը յանդիպում է ժողովրդի սաստիկ ընդիմադրութեանը, ինչպէս լսում ենք մինչև այժմ նորա աշակերտների թիւը հասնում է 4-ի իսկ այն ինչ նախկին ուսուցչի օրով աշակերտների թիւը հասնելիս է եղել 50 ի։

—

Նոյն տեղից մեզ գրում են որ այս օրերս Դավրէժ է հասել Վեհ. Հայրիկի յանձնարարութեամբ պ. Բաղդասարեան Միհրանը որը մտադիր է ժողովրդի նուիրատուութիւններով Սալմաստում բանալ մի որբանոց։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ամսոյս 20-ին Ֆրանսիայում մի մեծ ողողում է պատահել մեծ վնասներ պատճառելով։ Շատ կամուրջներ, տներ, ֆաբրիկներ փլել են 100000 բանւորներ անգործ են մնացել։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յառաջիկայ կիւրակի 23 Հոկտ. Ս. Գէորգ եկեղեցում զկնի Ս. Պատարագից հոգեհանգիստ պիտի կատարուի Ն. Կայսերական Մեծութեան Ռուսաց ի Տէր հանգուցեալ ԱԼԷՔՍԱՆԴԸՐ III Մեծազօր Կայսեր համար, հետևաբար կը խնդրուի Թէհրանայ Ռուսահպատակ հայերից իւրեանց ներկայութեամբ մեծարել Օգոստափառ հանգուցելոյն անմահ յիշատակը։

Սէթ Պ. Ներսիսեանց

ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ՀԱՅ

ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻՑ

Ծախւում են խմբագրութեանս մէջ։

Գինն է Թէհրանում վեց ղռան իսկ Պարսկաստանի օտար քաղաքների համար 8 ղռան։